Կ Ա Ր Գ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՄ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌԱԾ ԵՎ ԱՎԱՐՏԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է ասպիրանտուրայում պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետներին (այսուհետև՝ մասնագետ) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում (այսուհետև՝ կազմակերպություն) համապատասխան մասնագիտությամբ աշխատանքի տեղավորելու կարգը:

2. Կազմակերպությունն ասպիրանտուրայի ընդունելության դիմում ներկայացրած դիմորդի հետ կնքում է աշխատանքի տեղավորման պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ միասին և նախապես տրամադրվում դիմորդին:

3. Կազմակերպությունը.

1) պարտավորվում է ուսումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում դիմորդին տեղավորել աշխատանքի համապատասխան մասնագիտությամբ՝ կրտսեր գիտական աշխատողի (կամ ասիստենտի) պաշտոնի,

2) իրավունք ունի լուծելու մասնագետի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով,

3) մասնագետին աշխատանքի չտեղավորելու դեպքում՝ կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

4. Մասնագետը՝

1) պարտավորվում է առնվազն 3 տարի աշխատել կազմակերպությունում,

2) իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջելու համապատասխան մասնագիտությամբ գիտամանկավարժական աշխատանք,

3) պայմանագրով նախատեսված աշխատանքից հրաժարվելու դեպքում պարտավորվում է կազմակերպությանը փոխհատուցել ուսումնառության տարիների

ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իր վրա ծախսված գումարը:

5. Կազմակերպությունը յուրաքանչյուր տարի ապրիլին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետև՝ նախարարություն) է ներկայացնում հաջորդ տարում ասպիրանտուրան ավարտող մասնագետների ցուցակը:

6. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (այսուհետև՝ նախարար)՝

1) ասպիրանտուրան ավարտող մասնագետների ցուցակներին համապատասխան, հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծում նախատեսում է բազային ֆինանսավորմամբ կրտսեր գիտական աշխատողի հաստիքներ,

2) ասպիրանտուրան ավարտած մասնագետի համար, տվյալ տարվա բյուջետային հատկացումների սահմաններում, կազմակերպությանը հատկացվում է բազային ֆինանսավորմամբ կրտսեր գիտական աշխատողի հաստիքներ:

7. Մասնագետի համար Հայաստանի Հանրապետության բուհերի ամբիոններում ասիստենտի հաստիք հատկացվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից:

8. Նախարարը՝ միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով այլ պետությունների կազմակերպություններում ասպիրանտուրայի ընդունելության դիմում ներկայացրած դիմորդի հետ կնքում է աշխատանքի տեղավորման պայմանագիր:

9. Այլ պետությունների կազմակերպություններում միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերի ծրագրերով ասպիրանտական ուսուցման մեկնած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ նախարարություն դիմելուց հետո, մեկամսյա ժամկետում կազմակերպությունում համապատասխան մասնագիտությամբ տեղավորվում են աշխատանքի՝ նախարարության կողմից բազային ֆինանսավորմամբ նախատեսված պահուստային հաստիքների հաշվին: